ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **11/10/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7/2
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 22 անդամ:

Բացակա էին՝ Մելինե Գասպարյանը, Ալեքսանդր Խաչատուրյանը, Նաիրա Մելիքյանը, Կարեն Սերոբյանը, Արմեն Քոսակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Աննա Չոբանյանը, Եղիշե Ավետիսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավար՝ Էդուարդ Բաբայանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Նախքան նիստի օրակարգին անցնելը, Վ. Բաբաջանյանը հայտնեց, որ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության ղեկավար Ա. Քոսակյանը մարզական միջոցառումներին մասնակցելու նպատակով գտնվում է արտերկրում, որի մասին տեղեկացրել է ժամանակին, ուստի նրա բացակայությունը համարվում է հարգելի:

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 11-ի յոթերորդ նստաշրջանի հերթական երկրորդ նիստի հետևյալ օրակարգը.

1) Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեի ինն ամսվա եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.
2) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Կաթնաղբյուր գյուղի 5-րդ փողոցի թիվ 32 հասցեում գտնվող հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին.
3) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 14 շենքի թիվ 48 բնակարանն անհատույց օտարելու մասին.
4) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Հանրապետության պողոտայի 7 շենքի 60 բնակարանն անհատույց օտարելու մասին.
5) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Ուսանողական թաղամասի 4/1/1 շենքի թիվ 430 բնակարանն ուղղակի վաճառքով օտարելու մասին.
6) Աբովյան համայնքի Արամուս գյուղում գտնվող 07-013-0101-0176 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարելու մասին.
7) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան քաղաքի Է. Ավագյան փողոցի թիվ 24/1 հասցեում գտնվող հողամասն Զավեն Հակոբյանին ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարելու մասին.
8) Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 217-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին.
9) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
10) Աբովյան համայնքի ավագանու անդամ Վրեժ Մամուլյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին.
11) Աբովյան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Նախագծի ներկայացումից հետո Վ. Բաբաջանյանը նշեց, որ՝
1. օրակարգն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հրապարակվել է,
2. ուղարկվել ավագանու իրավասու հանձնաժողովներին,
3. «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 21.1 հոդվածով սահմանված՝ շահերի բախման վերաբերյալ դիմումներ չկան:

Ծավալվեց նախագծի քննարկում: Հաշվի առնելով մշտական հանձնաժողովում կայացած քննարկումը, առաջարկվեց օրակարգի նախագծի 1-ին կետի 4-րդ և 6-րդ ենթակետերը հանել օրակարգից՝ նշված հարցերի վերաբերյալ հետագայում լրացուցիչ ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 145-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Ի գիտություն ընդունել Աբովյան համայնքի 2024 թվականի բյուջեի ինն ամսվա եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 146-Ա/

Քվեարկության արդյունքների ամփոփումից հետո Աննա Չոբանյանն ավագանու անդամների ուշադրությունը հրավիրեց Աբովյան համայնքի ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններին վերաբերող կարևոր խնդրի վրա: ՀՀ Կոտայքի մարզպետի աշխատակազմից ստացվել է գրություն (մուտք՝ Պ-2135, 24.09.2024թ.), որով ներկայացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիրքորոշումը 15.07.2021 թվականի N 1169-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից՝ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների երեխաների ֆինանսավորման հետ կապված, մասնավորաբար ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդրման աշխատանքների հետաձգման և նշված արտոնությունը 2026 թվականի սեպտեմբերի 1-ից կիրառելու մասին: Միաժամանակ Աննա Չոբանյանը նշեց, որ հարցը ոչ միայն իրավական է, այլև ունի զգայական բնույթ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների նշված արտոնությունն

ամրագրված է նաև Աբովյան համայնքի ավագանու 22.12.2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն որոշման 3-րդ հավելվածի 7-րդ կետի 4-րդ ենթակետով և վերաբերվում է Աբովյան համայնքի անապահով և խիստ խոցելի ընտանիքների շուրջ 100 երեխայի, Աբովյանի համայնքապետարանը մինչև ընթացիկ տարվա ավարտն իր միջոցների հաշվին կփոխհատուցի նշված ընտանիքների երեխաների վճարը, որի մասին համապատասխան գրություն ուղարկվել է նաև շահագրգիռ մարմիններին (Ե-6612, 09.10.2024թ.):

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 32 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 23-ի N 01/06/06542-2024 գրությունը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 24-ի N Պ-2141), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2020 թվականի փետրվարի 27-ի 08022023-07-0080 սեփականության վկայական) Կաթնաղբյուր գյուղի 5-րդ փողոցի թիվ 32 հասցեում գտնվող 07-034-0104-0013 կադաստրային ծածկագրով 7886,0 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ նորակառույց դպրոցի շենքի սպասարկման ու պահպանման համար:
2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Տ. Գեղամյանը հարց հնչեցրեց, նախորդ տարվա ընթացքում հավանության արժանացած սուբվեցիոն ծրագրերի իրականացման ընթացքի և արդյունքների մասին՝ մասնավորապես Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի սպորտի և մշակույթի համալիր կենտրոն»-ի վերանորոգման աշխատանքների ընթացքի մասին:

Դ. Զարոյանը ներկայացրեց համակողմանի տեղեկատվություն սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 147-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ 3-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ 14 ՇԵՆՔԻ ԹԻՎ 48 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մեսրոպ Սիմոնյանի ընտանիքը 1985 թվականից բնակվում է Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 14 շենքի թիվ 48 բնակարանում, հաշվի առնելով Մեսրոպ Սիմոնյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 26-ի N Ք-7061), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2023 թվականի նոյեմբերի 24-ի N 24112023-07-0206 վկայական) Աբովյան քաղաքի 3-րդ միկրոշրջանի 14 շենքի 105.95 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով թիվ 48 բնակարանն անհատույց օտարել Մեսրոպ Պետյայի Սիմոնյանին:
2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մեսրոպ Սիմոնյանի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մեսրոպ Սիմոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 148-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ

ՔԱՂԱՔԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 4/1/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 430 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 199-Ն որոշման, հաշվի առնելով «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի սեպտեմբերի 08-ի թիվ «129Դ-Վ/023» անշարժ գույքի գնահատման հաշվետվությունը, որով անշարժ գույքը գնահատվել է 670 000 (վեց հարյուր յոթանասուն հազար) դրամ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մարինե Խաչատրյանը 2015 թվականից բնակվում է Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի ՈՒսանողական թաղամասի 4/1/1 շենքի թիվ 430 բնակարանում, հիմք ընդունելով Մարինե Խաչատրյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 26-ի N Ք-7068), Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2013 թվականի հունիսի 26-ի N 26062013-07-0013 վկայական) Աբովյան քաղաքի ՈՒսանողական թաղամասի 4/1/1 շենքի 17.52 քառակուսի մետր մակերեսով թիվ 430 բնակարանն ուղղակի վաճառքով՝ 670 000 (վեց հարյուր յոթանասուն հազար) դրամով, օտարել Մարինե և Նարեկ Խաչատրյաններին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են վճարել.
1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին 670 000 (վեց հարյուր յոթանասուն հազար) դրամ՝ բնակարանի գինը,
2) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին 73 000 (յոթանասուներեք հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար:
3. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է սույն որոշման 1-ին կետում նշված անձանց կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը ձայների մեծամասնությամբ տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 149-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Է. ԱՎԱԳՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 24/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԶԱՎԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ, ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի, 2-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 198-Ն և N 199-Ն որոշումների, հիմք ընդունելով Զավեն Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2024 թվականի սեպտեմբերի 25-ի N Ք-7049), Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***

1. Զավեն Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի հունվարի 05-ի N 05012022-07-0029 վկայական) Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Է. Ավագյան փողոցի թիվ 20 հասցեում գտնվող 07-002-0039-1653 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 120.9 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասին կից Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2024 թվականի օգոստոսի 14-ի N 14082024-07-0164 վկայական) Աբովյան քաղաքի Է. Ավագյան փողոցի թիվ 24/1 հասցեում գտնվող 07-002-0039-1857 կադաստրային ծածկագրով 118.5 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասը կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով օտարել սահմանակից ընդլայնվող 07-002-0039-1653 կադաստրային ծածկագրով հողամասի սեփականատեր Զավեն Անդրանիկի Հակոբյանին:

2. Զավեն Հակոբյանը պարտավոր է՝

1) Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 1 245 886 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր ութսունվեց) դրամ՝ օտարվող հողամասի կադաստրային արժեքը.

2) Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին վճարել 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար և 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

3. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումները կատարվում են Զավեն Հակոբյանի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զավեն Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 150-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 217-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը 2024 թվականի ընթացքում աճուրդային կարգով օտարելու մասին» N 217-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝ որոշման 1-ին կետում 223-րդ տողից հետո լրացնել նոր՝ 245-261-րդ տողերով.

245	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 61/7 հողամաս	30,0	07-002-0039-1870	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	320.0
246	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սարալանջի փողոց, 2/30	20,7	07-002-0089-0406	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	220.0
247	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, Սևանի փողոց, 13/2 հողամաս	1367,3	07-002-0048-0213	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	արդյունաբերական օբյեկտների	6 100.0
248	Համայնք Աբովյան, ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան 44/11	22,4	07-002-0039-1866	բնակավայրերի	հասարակական կառուցապատման	240.0
249	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Դուրյան թաղամաս, 8-րդ փողոց, 40/1	60,4	07-011-0410-0051	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	640.0
250	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Բ թաղամասի 1-ին փողոց 32 հողամաս	680,0	07-011-0033-0061	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	7 300.0
251	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Բ թաղամասի 2-րդ փողոց 1-ին նրբանցք 9	269,7	07-011-0218-0001	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3 000.0
252	Համայնք Աբովյան, գ. Առինջ, Պ. Սևակի թաղամասի 4-րդ փողոց 18	769,1	07-011-0086-0008	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	12 500.0

253	Համայնք Աբովյան, գյուղ Արամուս	21495,5	07-013-0170-0044	գյուղատնտեսական	այլ հողատեսք	2 000.0
254	Համայնք Աբովյան, գյուղ Արամուս	18587,8	07-013-0174-0009	գյուղատնտեսական	այլ հողատեսք	1 800.0
255	Համայնք Աբովյան, գ. Գետարգել, Հ. Վերդյան փողոց, 1-ին փակուղի, 75 հողամաս	300,0	07-058-0002-0148	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 100.0
256	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի, 16 փողոց, թիվ 12 հող	1000,0	07-043-0128-0225	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	3 000.0
257	Համայնք Աբովյան, գ. Մայակովսկի հողամաս	9273,8	07-043-0128-0216	գյուղատնտեսական	վարելահող	1 500.0
258	Համայնք Աբովյան, գ. Կամարիս, 12-րդ փողոց, 10	1219,3	07-035-0143-0062	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 300.0
259	Համայնք Աբովյան, գ. Կամարիս, 12-րդ փողոց, 14 հողամաս	1234,8	07-035-0143-0053	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	2 500.0
260	Համայնք Աբովյան, գ. Գեղաշեն, 3-րդ թաղամասի 6-րդ փողոց, 19/1 հողամաս	800,0	07-023-0015-0031	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	1 000.0
261	Համայնք Աբովյան, գ. Գեղաշեն, 2-րդ թաղամասի 6-րդ փողոց, 4/1 հողամաս	254,0	07-023-0260-0006	բնակավայրերի	բնակելի կառուցապատման	320.0

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու մշտական հանձնաժողովն առաջարկել է աճուրդով օտարվող հողամասերի ցանկում կատարել հետևյալ փոփոխությունները՝ 245-րդ, 246-րդ, 248-րդ, 249-րդ տողերում ընդգրկված հողամասերի մեկնարկային գները կրկնապատկել, իսկ 253-րդ և 254-րդ տողերում ընդգրկված հողամասերի մեկնարկային գները ավելացնել մեկ միլիոն դրամով:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Նախագիծը դրվեց քվեարկության առաջարկված տարբերակով:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 151-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2024 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 152-Ա/

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ՎՐԵԺ ՄԱՄՈՒԼՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավագանու անդամ Վրեժ Մամուլյանը 2024 թվականի վեցերորդ նստաշրջանի ընթացքում տեղի ունեցած ավագանու 6 նիստից, 90 քվեարկությունից բացակայել է 4 նիստից, 61 քվեարկությունից, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Վաղաժամկետ դադարեցնել Աբովյան համայնքի ավագանու անդամ Վրեժ Մամուլյանի լիազորությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Զեկուցողը նշեց, որ Վ.Մամուլյանը օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացվել է բացակայությունների վերաբերյալ, ստացել է համապատասխան տեղեկանքը, որը կցված է քննարկվող նախագծին:
Ավագանու անդամների կողմից արվեց առաջարկ, որպեսզի Վ. Մամուլյանը ներկայացնի իր պատկերացումներն ու տեսլականը հետագա գործունեության վերաբերյալ: Խոսքը տրվեց ավագանու անդամ Վ. Մամուլյանին: Վերջինս նշեց, որ աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով չի ստացվել նախորդ նստաշրջանի նիստերին ներկա գտնվել, բայց հետայսու մասնակցելու է նիստերին:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովի կարծիքները եղել են տարբեր՝ խնդիրը թողնելով ավագանու նիստին:

Կողմ-0 Դեմ-22 Ձեռնպահ-0

Որոշումը չի ընդունվել:

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Աբովյան համայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի նոյեմբերի 14-ը՝ ժամը 16:00:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-22 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 153Ա/

Ավագանու անդամներ

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ

ԴԱՎԻԹ ԶԱՐՈՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎՐԵԺ ՄԱՄՈՒԼՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՊՈՂՈՍՅԱՆ

ՊԵՏԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆ_____